ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«07» 06 2024 թ.
№ ԲԵՆ-գԼ-864

«Գոհար Վարդանյան» Ա/Ձ-ին (ՀՎՀՀ 72937197)
հասցե՝ ՀՀ ք. Երևան, Սաֆարյան 2/17
էլ. հասցե՝ gg6112720312@mail.ru
հեռ. 091 05 07 59

ՀՀ պաշտպանության նախարարության և «Գոհար Վարդանյան» Ա/Ձ-ի միջև 25.12.2023թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-24-3/1-2 գնման պայմանագրի և դրա հիման վրա 28.02.2024թ. կնքված համաձայնագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «Գոհար Վարդանյան» Ա/Ձ-ն 2024թ. 2-րդ եռամսյակում, բայց ոչ ուշ քան 30.05.2024թ., պետք է մատակարարեր ընդհանուր՝ 23 հատ ՀՀ զինանշան (ՀՀ ԶՈՒ զինանշան), 23 հատ Դրոշակաձող (Դրոշի ձող տակդիրով), 2000 հատ Դրոշներ (ՀՀ պետական դրոշ) և 23 հատ Դրոշներ (ՀՀ պետական դրոշ՝ ծոփքերով), սակայն «Գոհար Վարդանյան» Ա/Ձ-ն 21.05.2024թ. ներկայացրել է դիմում (Մուտք ՊՆՏ-1672 առ 21.05.2024թ.)՝ նյութերի ներմուծման հետ ծագած խնդիրների պատճառով Պայմանագիրը լուծելու խնդրանքով, այսպիսով հրաժարվել է կնքված պայմանագիրը կատարելուց, և պարտավորվել է վճարել պայմանագրի և որակավորման ապահովումների գումարները:

Հիմք ընդունելով «Գոհար Վարդանյան» Ա/Ձ-ի դիմումը, ՀՀ պաշտպանության նախարարությունը 2024թ. հունիսի 07-ին, միակողմանի ամբողջությամբ, լուծել է վերոնշյալ Պայմանագիրը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ տեղեկացնում եմ, որ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի ապահովման գումարը կազմում է **512 760** ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է փոխանցել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին, իսկ որակավորման ապահովման գումարը կազմում է **769 140** ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է փոխանցել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ «Գոհար Վարդանյան» Ա/Ձ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո, 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 22 553,8 ՀՀ դրամ՝ որպես տուգանք Պայմանագրի 6.3 կետի համաձայն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Ընդ որում, Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում, պայմանագրի և որակավորման ապահովման գումարները մինչև 17.06.2024թ. ներառյալ, Ձեր կողմից վճարվելու դեպքում՝ «Գոհար Վարդանյան» Ա/Ձ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարներն անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 17.06.2024թ. ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2072 սենյակ:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ «Գոհար Վարդանյան» Ա/Ձ-ի կողմից տուգանքի, պայմանագրի և որակավորման ապահովումների գումարները սահմանված ժամկետում չվճարելու դեպքում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից միջոցներ կձեռնարկվեն «Գոհար Վարդանյան» Ա/Ձ-ի կողմից վճարման ենթակա՝ տուգանքի, պայմանագրի և որակավորման ապահովման գումարները գանձելու ուղղությամբ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ